ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ԽԱՉ ԱՄԷՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԸ ԿԱՆԱԴԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈՅ

23 Յունիս 2004 թուականը պատմական օր պիտի մնայ Կանադահայոց տարեգրութեան մէջ: Երկար ամիսներու խորհրդակցութիւններէն ետք Կանադահայոց Թեմական Խորհուրդի և Թորոնթոյի Ս. Խաչ ամէնօրեայ դպրոցի Հոգաբարձութեան միջև կայացուած փոխադարձ համաձայնութեամբ այսուհետ Թորոնթոյի Ս. Խաչ ամէնօրեայ դպրոցը պիտի գործէ Թեմի հովանու ներքոյ: Ստորագրուած համաձայնագիրը հետևեալն է.

«Կանադահայոց Թեմական Խորհուրդը և Թորոնթոյի Ս. Խաչ Ազգային ամենօրեայ վարժարանի Հոգաբարձութիւնը ուրախութեամբ կու գան յայտարարելու, որ քանի մը ամիսներ շարունակ տևած խորհրդակցութիւններէ վերջ փոխադարձ համաձայնութեամբ որոշում կայացուած է, որ Թորոնթոյի Ս. Խաչ ամենօրեայ վարժարանը այսուհետև անցնի Կանադահայոց Առաջնորդարանի հովանու ներքոյ:

Սոյն որոշումը իր վերջնական ձևին մէջ պիտի մտնէ համապատասխան համաձայնագրի երկու կողմերու ստորագրութեամբ մինչև 31 Օգոստոս 2004 թ.

Կանադահայոց Թեմական Խորհուրդ
Ս. Խաչ ամէնօրեայ վարժարանի Հոգաբարձութիւն:
23 Յունիս 2004»

Հայաստանի Հանրապետութեան, Գանատայի և ապա Ս. Խաչ վարժարանի քայլերգներով սկսուեց դպրոցի ամավերջի հանդէսը: Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական եկեղեցին այս գեղեցիկ առիթին համար սիրով տրամադրած էր եկեղեցւոյս Մակարոս Արթինեան սրահը, ուր և հաւաքուեցան շուրջ 300-է աւելի Թորոնթոյահայեր:

Հանդէսին կը նախագահեր Գանատահայոց Թեմի Բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Բագրատ եպս. Գալստանեանը, իր կողքին ունենալով Ս. Երրորդութիւն Հայց. եկեղեցւոյ Հովիւ Արժ. Տ. Զարէհ ա. քհնյ. Զարգարեանը, եկեղեցւոյս Ծխական Խորհուրդի ատենապետ Տիար Հրաչ Շիշմանեանը, ինչպէս նաև գաղութիս Ամէնօրեայ, Շաբաթօրեայ և Կիրակնօրեայ վարժարաններու Տնօրինութիւնները և զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Շուրջ 3 ժամ տևած հանդեսը կը պարունակեր ասմունքներով, երգերով և պարերով հարուստ յայտագիր, որն ներկայացուեցաւ դպրոցիս աշակերտութեան կողմէ: Ապա խօսք առնելով իր և Հոգաբարձութեան անունէ աշակերտներուն բարեմաղթանքներ յղեց դպրոցի Հոգաբարձութեան ատենապետ Տիար Ժիրայր Չարուրօղլուն, որմէ ետք բեմ բարձրացաւ Թեմական Խորհուրդի անդամներէն Բրշ. Հրանդ սրկ. Չիթակը և ընթերցեց Գանատահայոց Առաջնորդարանի և Ս. Խաչ ազգային ամէնօրեայ Վարժարանի միասնական համաձայ-

նագիրը՝ վարժարանը Գանատահայոց Առաջնորդարանի անմիջական հովանաւորութեան տակ անցնելու մասին, որն ընդունուեցաւ մեծ խանդավառութեամբ և բուռն ծափահարութիւններով:

Այնուհետև աւարտական դասարաններուն տրուեցան Վարժարանի վկայականները: 9 հոգիներ դարձան աւարտական 6-րդ դասարանի և 11 հոգիներ՝ Ծաղիկ դասարանի շրջանաւարտներ:

Ապա բարեմաղթանքի խօսք ըսաւ եկեղեցւոյս Հովիւ Արժ. Տ. Զարէհ ա. քհնյ. Զարգարեան:

Հանդէսի աւարտին իր սրտի օրհնաբեր խօսքը աշակերտներուն և ներկաներուն ուղղեց Թեմիս Բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Բագրատ եպս. Գալստեանեանը: Առաջնորդ Սրբազան Հայրը շեշտեց, որ Գանատահայոց Առաջնորդարանը նոր առաքելութեան մէջ մտած է ուղղակի կերպով ստանձնելով նոր սերունդի կրթութեան գործը այս ափերի վրայ, որը միշտ եղած է Հայ Եկեղեցւոյ առաքելութիւնը: Իր խօսքի մէջ Սրբազան Հայրը նշեց, որ Ս. Խաչ վարժարանի Կանադայի հայոց թեմի տնօրինութեան ներքո անցնելու մասին տեղեակ պահած է ազգիս Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբութիւնը իր Հայրական ուրախութիւնը յայտնած է և օրհնութիւնը փուած է այս առիթով: Սրբազան Հայրը բարձր գնահատեց Թեմական Խորհուրդը և Ս. Խաչ վարժարանի Հոգաբարձութեանը այս ընդհանրական շահի գիտակցութեամբ գործելու բարի կամքի դրսևորման համար. «Այս պիտի օրինակ ըլլայ մեր բոլոր միութիւններու և կազմակերպութիւններու համար՝ միատեղ գործելու նուիրական գաղափարով առաջնորդուելով ստեղծելու խաղաղ և ստեղծագործ միջավայր մեր նոր սերունդի համար»:

Ուրախութեան և յուզումի արցունքներով պարուրուած մթնոլորտ մը կը տիրեր ամբողջ սրահին մէջ այս գեղեցիկ իրադարձութեան առիթով: Ուսուցիչներ, ծնողներ, հիմնադիրներ, համակիրներ և աշակերտներ մեծ ուրախութեամբ և տպաւորութիւններով մեկնեցան այս յիշատակելի օրով զորացած նոր յաջողութիւններ արձանագրելու տրամադրութեամբ:

Հանդէսը աւարտուեց Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ